ԱՐՑԱԽԻ ՄԱՅՐ ԲՈՒՀԻ 50-ԱՄՅԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Արցախի պետական համալսարանը եղել է ու կա Արցախի Հանրապետության պետականության հենասյուներից մեկը, արցախահայության կրթական, մշակութային և գիտական արժեքների ստեղծողն ու կրողը, այն գլխավոր հիմնաքարը, որի վրա կառուցվում, հիմնավորվում է մեր երիտասարդ հանրապետության գիտակրթական ներուժը: Պատմական տարբեր ժամանակաշրջաններում արցախահայությունն իրեն բաժին հասած փորձություններին, նետված մարտահրավերներին դիմակայել է՝ ապավինելով ոչ միայն բազկի ուժին, այլև իր մտավոր կարողություններին՝ զինված լինելով գիտելիքի կայուն ուժով: Հենց այդ ուժը, նախնյաց թողած գիտակրթական ու մշակութային ժառանգությունն են արցախահայությանը կառչած պահել իր հայրենիքին ու ազգային արժեքներին:

Հայոց բազմադարյան գիտակրթական ու մշակութային ժառանգության մի մասը կազմող արցախյան հատվածը պատմական անարդարության հետևանքով բռնակցվեց Ադրբեջանին: Ստեղծվեց ԼՂԻՄ-ը /Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ/, որի նկատմամբ խորհրդային իշխանության 70 տարիների ընթացքում Ադրբեջանը դրսևորեց հակահայկական քաղաքականություն թե՛ հասարակական–քաղաքական, թե՛ սոցիալ-տնտեսական, թե՛ գիտակրթական ու մշակութային կյանքի բնագավառներում՝ նպատակ ունենալով հասնել մարզի հայաթափմանը, նրա հայեցի դիմագծի խեղաթյուրմանը, սակայն ապավինելով ազգային արժեհամակարգին, մտավոր ներուժին՝ արցախահայությունը կարողացավ ոչ միայն դիմակայել, այլ նաև մաքառել, դուրս գալ ազգային կենսակերպը խեղդող կապանքներից ու հռչակել ազատ ու անկախ ապրելու իրավունքը: Մաքառման, դիմակայման ու հաղթանակի այդ երթին իր գլխավոր դերակատարությունն ու զգալի ավանդն ունեցավ Արցախի պետական համալսարանը՝ Արցախի մայր բուհը, որի ստեղծման պատմության արմատները, ամուր կերպով մխրճված լինելով մայր հողում, ոչ միայն առողջ ու կայուն էին, այլև անկախության պայմաններում նորից ծլարձակեցին՝ նոր վերածնունդ տալով արցախահայության գիտակրթական կյանքին, դառնալով ազգային-ազատագրական պայքարի օջախ, ազգային-գաղափարախոսության երակ, մշակութային արժեքների պահպանիչ, գիտական կադրերի պատրաստման դարբնոց, մտավոր ներուժի ստեղծող, Արցախի պետականության կայացման, հզորացման ներքին մղիչ:

Ադրբեջանի կազմում ընդգրկված ԼՂԻՄ-ի ուծացման, վերջնական հայաթափման քաղաքականության ուղղություններից մեկն էլ արցախահայությանը իր ազգային մշակույթին, պատմությանը

հաղորդակցվելու, նրանով սնուցվելու հնարավորությունների արգելումն էր: Մարզի ղեկավարությունը, մտավորականության բազմաթիվ ներկացուցիչներ ժամանակ առ ժամանակ դիմումներով, պահանջագրերով ահազանգել են, բարձրաձայնել խնդիրը. 1966թ. ԽՍՀՄ ղեկավարությանն ուղղված դիմումում ասված էր. « Ղարաբաղը Հայաստան է իր կենսաձևով, իր պատմությամբ, բայց արհեստականորեն կտրված է նրանից...»:

Մարզի հայությունը հնարավորություն չուներ իրացնելու հայկական մշակույթը, հայոց պատմությունն ուսումնասիրելու, հայերենով կրթություն ստանալու անկապտելի իրավունքը: Դիմումներում անհերքելի փաստեր էին բերված կրթության և մշակույթի բնագավառում Ադրբեջանի իշխանությունների կողմից վարվող հակահայկական քաղաքականության վերաբերյալ: Մարզի մտավորականության արժանի զավակներն իրենց վրա վերցրին ոչ միայն Արցախի նկատմամբ 1921թ. կատարված պատմական անարդարությունը վերացնելու պահանջի արտահայտումը, այլև մարզում հայեցի գիտակրթական օջախ ստեղծելու, հիմնելու խնդիրը: Մարզի մտավորականությունը գիտակցում էր, որ Ադրբեջանի ազգային հակահայկական քաղաքականությունն ի վերջո կարող էր հանգեցնել մարզի հայաթափմանը, ուստի և լծվեց երիտասարդության արտահոսքը կանխելու ռազմավարական խնդրի իրականացմանը: Լեռնային Ղարաբաղում մանկավարժական բուհի ստեղծման նախապատրաստական աշխատանքը հանձնարարվեց կուսակցության մարզային կոմիտեի գաղափարական աշխատանքների գծով քարտուղար Ալեքսանդր Հարությունյանին և մարզգործկոմի նախագահի առաջին տեղակալ Երվանդ Բաղդասարյանին: Բուհի ստեղծման անհրաժեշտությունը հայկական կողմը հիմնավորում էր մի քանի փաստերով.

ա/ Լեռնային Ղարաբաղում և նրա հարևան ադրբեջանական շրջաններում, չհաշված Բաքվի հայությունը, ապրում են 250.000-ից ավելի հայեր, որոնց դպրոցահասակ սերնդի բացարձակ մեծամասնությունը սովորում է հայկական դպրոցներում, հետևաբար ինստիտուտը կունենա ուսանողության համապատասխան քանակ,

բ/ մարզի տարածքում և հարակից շրջաններում կլուծվի կադրային ապահովվածության խնդիրը,

գ/ հայկական մարզում հայերեն ուսուցմամբ մանկավարժական բուհի ստեղծումը կլինի միանգամայն օրինավոր՝ հաշվի առնելով այն փաստը, որ ԼՂԻՄ-ը Խորհրդային Միության տարածքում միակ ինքնավար վարչական տարածքն է, որը չունի ազգային բարձրագույն ուսումնական հաստատություն:

Մարզի «ադրբեջանականացումը» գլխավոր ռազմավարական խնդիր որդեգրած ադրբեջանական իշխանություններն ի վերջո գնացին Ստեփանակերտում մանկավարժական բուհ հիմնելու քայլին, մանավանդ որ այն հանդիսանալու էր Բաքվի մանկավարժական ինստիտուտի

մասնաճյուղ և ունենալու էր խայտաբղետ «ինտերնացիոնալ» բնույթ. ուսուցումը տարվելու էր երկու լեզուներով ՝ հայերեն և ադրբեջաներեն:

Այսպիսով՝ 1969թ. սեպտեմբերին Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումի նախկին շենքի մի մասում սկսվեցին բուհական ուսումնական պարապմուքները: Բուհը բացվեց որպես Բաքվի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղ, որի առաջին տնօրեն նշանակվեց փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Շ.Մ.Աբրահամյանը: Մասնաճյուղն ուներ երկու ամբիոն՝ հայոց լեզվի և գրականության ու մաթեմատիկայի: Ուսումնական գործընթացն սկսվեց երեք մասնագիտություններով՝ հայոց լեզու և գրականություն, մաթեմատիկա ու ֆիզիկա:

Արդեն 1974-1989թթ. ինստիտուտում գործում էր չորս ֆակուլտետ՝ բանասիրական, պատմական, ֆիզիկա-մաթեմատիկական և տարրական կրթության մանկավարժության ու մեթոդիկայի, իսկ ամբիոնների թիվը հասել էր 8-ի: Բուհում դասավանդում էին իրենց գործին նվիրյալ առաջավոր մտավորականներ: Շնորհիվ վերջիններիս ազգանվեր գործունեության՝ ինստիտուտը դարձավ հայեցի կրթության, դաստիարակության օջախ, որին վերապահվեց լինել նաև ազգային գաղափարախոսության, արցախյան շարժման սկզբնավորման առաջին օջախներից մեկը, արցախյան պայքարի ջահակիրը:

Ադրբեջանի իշխանություններին չհաջողվեց բուհը դարձնել հակահայկական քաղաքականության գործիք, որով նախատեսում էր արագացնել մարզի «ադրբեջանականացման» վաղուց որդեգրած ռազմավարությունը:

1988թ. սկիզբ առած արցախյան պայքարի նոր վերածննդի պայմաններում Արցախի մայր բուհը արժանապատվորեն նվիրվեց հայրենիքի պաշտպանության գործին, դարձավ ազատագրական պայքարի գաղափարախոս, արցախահայության ազգային ինքնագիտակցության բարձրացման, պայքարի կազմակերպման հարթակներից մեկը՝ իր մտավորական սերուցքով, ուսանողությամբ լծվելով ազատագրական պայքարին՝ Ադրբեջանի լուծը թոթափելու, Մայր Հայաստանին միանալու նվիրական գործին:

Դեռևս 1986թ. ապրիլից ընդհատակում գործող «Արցախական միության» աշխատանքներին իրենց մասնակցությունը հանդես բերեցին հայ ուսանողները, ովքեր թրծվեցին պայքարի կազմակերպման, նպատակների իրականացման, հանուն գաղափարի միավորման բովում:

1988թ. փետրվարի 13-ին արցախահայությունն առաջին անգամ դուրս եկավ հանրահավաքի՝ իր ձայնը բարձրացնելու 70 տարիներ ի վեր ծխացող հարցի շուրջ՝ պահանջելով վերամիավորում Մայր հայրենիքին: Համալսարանի ուսանողությունն ու դասախոսական կազմն էին նախաձեռնողները առաջին հանրահավաքի և ակտիվ մասնակցություն ունեցան նաև հետագա հանրահավաքներին՝ դառնալով

համաժողովրդական պայքարի ծավալման ազդակն ու գաղափարաքաղաքական մշակը: Բուհից 200 ուսանողների ստորագրությամբ հեռագիր հղվեց ԽՄԿԿ գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովին, որտեղ ուսանողները պահանջում էին իրականություն դարձնել Արցախը Մայր հայրենիքին վերամիավորելու արդարացի պահանջը: Մի շարք դասախոսներ իրենց ելույթներում հիմնավորում էին պայքարի դուրս գալու անհրաժեշտությունը, պատմական անհերքելի փաստերով ապացուցում շարժման ծավալման արդարացիությունն ու անշրջելիությունը: Հատկանշական է բուհի մի շարք դասախոսների կողմից պատրաստված դիմումը, որն ընդունվեց ու ընթերցվեց 1988թ. մայիսի 28-ին Ստեփանակերտի Ազատության հրապարակում կայացած 30 հազարանոց հանրահավաքում: Դիմումը որպես բողոքի ձայն հղվեց ԽՄԿԿ կենտկոմի քարտուղար Ե. Լիգաչովի թույլ տված այն արտահայտության դեմ, որ ԼՂԻՄ-ի հայերի պահանջն անլուծելի է, քանի որ կապված է «ադրբեջանական գործոնի» հետ: Բուհի բազմաթիվ աշխատակիցներ ոչ միայն հեռագրեր ու նամակներ էին հղում ԽՍՀՄ ղեկավարության հասցեին, այլև հոդվածներով հանդես գալիս տարբեր պարբերականներում՝ փորձելով լսելի ու մատչելի դարձնել արցախահայության պահանջատիրությունը, պայքարի դուրս գալու արդարացի հիմնավորումը:

Ի պատասխան ինստիտուտի ստանձնած այս առաքելության՝ արցախահայության նկատմամբ իրականցվեց «պատժիչ գործողություն». 1988թ. հոկտեմբերին ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշմամբ փակվեց ԼՂԻՄ-ի միակ բուհը, ինչը խորհրդային կենտրոնի և Ադրբեջանի իշխանությունների հերթական միացյալ գործողությունն էր՝ ի պատասխան արցախահայության բարձրացրած արդարացի պահանջատիրության: Հայկական ԽՍՀ ժողովրդական կրթության մինիստրության կոլեգիայի 1988թ. հոկտեմբերի 17-ի որոշմամբ ինստիտուտի հայկական և ռուսական բաժինների ուսանողության ու պրոֆեսորադասախոսական անձնակազմի 989 անդամ / հայազգի/, այդ թվում առկա ուսուցման 373, հեռակա՝ 616, տեղափոխվեցին Կիրովականի մանկավարժական ինստիտուտի կազմ, իսկ ադրբեջանական բաժինը տեղափոխվեց Կիրովաբադ:

Սակայն 1988թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի աղետալի երկրաշարժի հետևանքով զգալիորեն տուժեցին Կիրովականի մանկավարժական ինստիտուտի մասնաշենքերն ու հանրակացարանը, ինչը փաստորեն անհնարին դարձրեց այնտեղ պարապմունքների հետագա շարունակումն ու կազմակերպումը: Արցախից այնտեղ ժամանած ուսանողներն ու դասախոսներն ստիպված էին վերադառնալ:

1989թ. մարտի 15-ի Հայկական ԽՍՀ ժողովրդական կրթության մինիստրության կոլեգիայի որոշմամբ Ստեփանակերտում բացվեց Կիրովականի մանակավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղը: Այն ղեկավարում էր տ.գ.թ., դոցենտ Ե.Հ. Բաղդասարյանը:

1989թ. դեկտեմբերի 20-ին բուհական կրթության բնագավառում տեղի ունեցավ մեկ փոփոխություն ևս: Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի գիտական խորհուրդը որոշեց Ստեփանակերտում բացել հեռակա ուսուցման ֆակուլտետի ընդհանուր տեխնիկական բաժանմունք՝ հաշվի առնելով այն, որ Արցախից ԵրՊԻ-ում սովորում էին 200-ից ավելի ուսանողներ, և ստեղծված պատերազմական իրավիճակը, ճանապարհների շրջափակումը հնարավորություն չէր տալիս լիարժեք կազմակերպելու վերջիններիս ուսումնական գործընթացը:

1991թ նոյեմբերի 1-ի ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության պետական կոմիտեի N85 որոշման համաձայն՝ ԵրՊԻ-ի Ստեփանակերտի ընդհանուր տեխնիկական բաժանմունքը վերակազմավորվեց ԵրՊԻ-ի Ստեփանակերտի մասնաճյուղի: Տնօրեն նշանակվեց տ.գ.թ. դոցենտ Ա.Ս.Ավանեսյանը:

Կրթական կյանքում տեղի ունեցող այս փոփոխությունները խոսուն փաստ են այն իրողության, որ ազատագրական պայքարին լծված արցախահայությունը շարունակել է մաքառել նաև իր գիտակրթական ու մշակութային արժեքների պահպանման ու զարգացման համար: 1992թ. հոկտեմբերին տեղի ունեցավ մի նշանակալից իրադարձություն. ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտեի միջնորդությամբ ՀՀ կառավարությունը 1992թ. հոկտեմբերի 13-ին որոշում կայացրեց / N 509/ Լեռնային Ղարաբաղի պետական համալսարան ստեղծելու մասին: Որոշման մեջ ասված էր. «Լեռնային Ղարաբաղի պետական համալսարանն ընդգրկել Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության նախարարության համակարգում՝ միավորելով Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղը և Վանաձորի մանկավարժական ինստիստուտի Ստեփանակերտի բաժանմունքը»:

Գիտության, կրթության հանդեպ հայի դարավոր հոգատարությունն ու սերը լավագույնս արտացոլվեցին նորանկախ Արցախի Հանրապետությունում համալսարան հիմնելու այս ճիշտ որոշման մեջ: Արցախահայությունը 92-ին ստիպված էր զենքը ձեռքին ապացուցելու իր հայրենատիրության իրավունքը, պաշտպանելու 1991թ. սեպտեմբերի 2-ին կայացրած անկախություն հռչակելու որոշումը, միաժամանակ ստեղծելու կրթօջախ, ուր պիտի շարունակվի հայրենիքի շենացումն ու նորօրյա արարումը:

Համալսարանի ավելի քան 400 ուսանողներ և դասախոսական գրեթե ողջ կազմը դարձան ազգային - ազատագրական պայքարի մասնակիցներ: Մայր բուհի ուսանողները դարձան առաջամարտիկներ՝ իրենց մտավոր ուժով ու պատասխանատվության բարձր գիտակցումով, Արցախի անկախ գալիքը կերտելու հավատով զինվորագրվելով պայքարին: Պատեհ ժամն էր գաղափարը իրականություն դարձնելու.

մասնագիտական գիտելիքը դարձավ ռազմական հմտություն և պայքարն առաջնորդելու կարողություն:

Հընթացս շարունակվում էին պարապմունքները բուհում: Մի կողմում՝ մարտիկ ուսանողներ, մյուս կողմում՝ թիկունքը գրով ու կրթությամբ զորացնող քույրեր ու մայրեր: Այդպես էլ արցախցին հաղթեց…

Մայր բուհի 72 ուսանողների կրթության վկայագրերը դարձան բուհի պատվի հուշարձան, նորօրյա ուսանողության խոնարհումի և արիության խորան: Իսկ նրանք, ովքեր վերադարձան վահանով, լծվեցին պետականշինության կերտմանը՝ իրենց ռազմական փորձառությամբ և մտավոր ներուժով սյուն դառնալով կառուցվող երկրին:

Հրադադարի հաստատումից հետո Արցախի մայր բուհը նոր ոգով ձեռնամուխ եղավ գիտակրթական գործընթացի ու պետականության կայացմանը՝ միտված իր առաքելության իրականացմանը: 1995թ. փետրվարի 6-ի ԼՂՀ կառավարության որոշմամբ ԼՂՀ պետական համալսարանը վերանվանվեց Արցախի պետական համալսարան, որը փաստացի դարձավ իրավահաջորդը մինչ այդ իր կազմում միավորած ուսումնական հաստատությունների:

ԼՂՀ հռչակումը, անկախության կերտումը նորովի վերախմբագրեցին համալսարանի առջև դրված խնդիրները: Այն դարձավ հանրապետության սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական տարբեր բնագավառներին անհրաժեշտ գիտական կադրերի ստեղծող, գիտության, կրթության, մշակույթի օջախ, որը լուրջ դերակատարություն ունի պետականակերտման, ազգային հայեցի գաղափարախոսության մշակման ու տարածման գործընթացում: Չընկրկելով ԼՂՀ միջազգային չճանաչվածության փաստից բխած դժվարությունների առջև՝ Արցախի պետական համալսարանը արժանվույնս ընդգրկվեց համաշխարհային նորարարական գործընթացներում, ստեղծեց բազմաթիվ միջազգային կապեր՝ կրթության և գիտության բնագավառում մշտապես աչալրջորեն հետևելով արդի զարգացումներին: Գիտակցելով իր առաքելության կարևորությունը և ելնելով այն առաջնահերթությունից, որ իր կողմից մատուցվող կրթական ծառայությունների որակն անմիջականորեն փոխազդում է երկրի առաջընթացի որակին՝ մայր բուհը ստանձնեց Արցախի Հանրապետության կրթական կարիքների բավարարման պատասխանատվությունը՝ դառնալով նորանկախ հանրապետության մասնագիտական ներուժի հիմնական ստեղծողը, կադրուժ ձևավորողն ու առաջարկողը:

2005 թվականից Արցախի պետական համալսարանը փաստացի ընդգրկվեց Բոլոնյան գործընթացում և քայլ առ քայլ սկսեց կառուցել կրթության որակի բարելավման նոր ճանապարհ:

Իր հիմնադրման օրվանից համալսարանի գերակա ուղղություններն էին բնական և հումանիտար գիտությունները, որոնք առայսօր էլ ուղենշային են բուհի առաքելության առաջնահերթություններում:

Տնտեսական, սոցիալական (իրավագիտություն, քաղաքագիտություն, լրագրություն, թարգմանչական գործ) ուղղություններն ավելի երիտասարդ են, և նրանց ներդրումը պայմանավորված էր ԱՀ հասարակատնտեսական ու իրավական համակարգերի ձևավորման ու զարգացման պահանջով:

Այսօր ԱրՊՀ-ն ԱՀ կառավարության հաստատած մասնագիտությունների գծով երեք հիմնական ուղղություններով՝ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ ՈԱԾ-ի սահմանած մակարդակներով (բալալավրի, մագիստրոսի, հետազոտողի որակավորումներ), գիտական հետազոտություն և հանրային ծառայություն, առաջարկում է կրթական ծրագրերի ընդգրկուն ցանկ՝ մանկավարժական, բնագիտական, հումանիտար, տնտեսագիտական, սոցիալական:

Ներկայումս համալսարանի 5 ֆակուլտետներում իրականացվում է **75** կրթական ծրագիր, որից 25-ը՝ բակալավրի, 44-ը՝ մագիստրոսի, 6-ը՝ ասպիրանտուրայի կրթական աստիճաններում: Սովորողների թիվը բակալավրիատում 2019թ. դրությամբ հասնում է 2141-ի, մագիստրատուրայում՝ 369-ի և ասպիրանտուրայում՝ 11-ի: Իր գործունեության 50 տարիների ընթացքում Արցախի մայր բուհը թողարկել է ավելի քան 23 հազար շրջանավարտ, ովքեր բարձր արդյունավետությամբ ներգրավված են երկրի տնտեսության բոլոր բնագավառներում՝ բարձր պահելով հարազատ բուհի անունն ու պատիվը :

Ամառային ամիսներին համալսարանի գործունեությունը նոր երանգներ է ստանում՝ ուսանողների հետ տարվող աշխատանքը կազմակերպելով և իրականացնելով ուսանողամետ և ուսանողակենտրոն քաղաքականության շրջանակներում՝ առանձնակի ուշադրություն դարձնելով անձի ձևավորման համակարգի այնպիսի կարևորագույն ուղղություններին, ինչպիսիք են ուսանողների կարիերայի ու անձնային աճին նպաստող միջոցառումները, ոչ ֆորմալ կրթական ծրագրերը, միջբուհական, հանրապետական ու միջազգային ուսանողական գիտաժողովներն ու ֆորումները, ամառային ճամբարներն ու դպրոցները, վրանային բանակումները, ինտելեկտուալ ծրագրային միջոցառումներն ու այցերը դեպի զորամասեր, բազային կազմակերպություններ ու դպրոցներ:

Ուսանողական ամառը հետաքրքիր ու ակտիվ է կազմակերպվում արտերկրի և հայաստանյան ավելի քան երեք տասնյակ բուհերի հետ ակտիվ համագործակցության շնորհիվ: ԱՀ կառավարության և միջազգային դրամաշնորհային ծրագրերի շնորհիվ իրականանում են խոշոր ծրագրեր՝ տասնյակ ուսանողների ներգրավմամբ, ինչպիսիք են ամառային ճամբարը Պատարայում, ուսանողների բազմաթիվ գործուղումները արտերկրի և հայաստանյան բուհեր, մասնակցությունը գիտաժողովներին, մասնագիտական դասընթացներին և այլն: Այս ամենը նպաստում է ԱրՊՀ միջազգային ճանաչվածության աստիճանի

բարձրացմանը, համահայկական և համաեվրոպական կրթական դաշտին նրա լիարժեք ինտեգրմանը, մասնագիտական պատրաստման որակի բարելավմանը, ուսանողների մոտ անհրաժեշտ մասնագիտական ու մարդկային որակների ձևավորմանը:

Հատկանշելի է, որ Արցախի պետական համալսարանը որպես կրթարան ընտրող դիմորդների բաժնեմասը Արցախի Հանրապետությունում ընդհանուր դիմորդների թվում կազմում է մոտ 85%, և սա վկայում է Արցախի պետական համալսարանի՝ ԱՀ բարձրագույն կրթության ոլորտում առաջատարը լինելու փաստը ու նաև հավաստում, որ կրթության ներառականության ու բաց միջավայրի առկայության պայմաններում էլ բուհը շարունակում է լինել մրցունակ նաև ՀՀ բարձրագույն կրթական հաստատությունների շարքում:

Մայր բուհ պատվանունը բարձր պահելով և կրթության որակի բարելավումը ուղեգիծ ընտրելով՝ Արցախի պետական համալսարանը իր կեսդարյա հոբելյանի շեմին հավատարմագրման նոր հայտ է ներկայացրել՝ այդպիսով իր կենսագրության մեջ նոր շրջափուլ բացելով և ուղենշելով վստահ ու կենսահաստատ իր պատվավոր երթի նոր շարունակությունը…